ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԸՂՈՒԹԻՒՆ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վեհ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք

Կոնդակ յանուն վիճ. կոնսիստորիայի Վրաստանի և Իմերեթիոյ, որով պատուիրեցաւ տալ անցագիր ուղիղ Էմմանուէլ քհ. Նազարեան մեկնել ի Մոսկուա ի նոր պաշտօնավայրն իւր. թ. 87։

— Յանուն թեմական Ատրպատականի գեր. Տ. Սահակ եպիսկոպոսի, որով լուծեալ համարի ի կարգէ, և ի կոչմանէ քահանայութեան Ղևոնդ քհ. Դավրիժու յաղագս ամբարշտութեան նորա. թ. 142։

— Յանուն թեմական Ատարախանի գեր. Տ. Արիստակէս արքեպիսկոպոսի, որով յանձնարարեմ յաւելուլ զոռձիկ Մեսրոպ քհ. հոգևոր հովուի Հայոց Սիբիրի. թ. 145։

— Յանուն թեմական Վրաստանի և Իմերեթի գեր. Տ. Դէորգ արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ արգելուլ քահանայից կրել լանջախաչս ձուլեալ պատկերաւ Փրկչին հակառակ մտաց կոնդակաց, որպէս և կամիցաւ՝ յեկեղեցւոջ. թ. 151։

— Շրջար. յանուն թեմականաց վիճակաց, որք ի Ռուսիա, ի հրահանգութիւն վասն պակաց գաղթականաց. թ. թ. 158—163։

— Շրջար. յանուն թեմականաց վիճակաց, որք ի Ռուսիա, յաղագս տալոյ տեղեկութիւն զվիճակէ, զթուոյ եկեղեցեաց, քահանայից և վանօրէից վիճակաց իւրեանց. թ. թ. 136—201։

— Յանուն ազգայնոց Մանչեսթր քաղաքի, յաղագս նպաստելոյ ապագրութեան Աստուածաշունչ Ս. Գրոց. թ. 203։

— Յանուն թեմական Ատրպատականի գեր. Տ. Սահակ եպիսկոպոսի և ժողովրդեան վիճակին, յաղագս ընտրութեան նոր թեմական իւրեանց. թ. 205։

— Յանուն թեմական Վրաստանի և Իմերեթի Գեր. Տ. Դէորգ արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ նմա զփոխադրութենէ Տ. Սահակ վրդ-ի ի փոխանորդութենէ Գորւոյ ի Նուխի, զկարգմանէ ի տեղի նորա Տէր Յովհաննէս վարդապետի վանահօր վանուցն Նաւնարաթի և զկարգմանէ Տ. Դիոնեսիոս վրդ-ի ի վանահայր վանօրէիցն Նաւնարաթի, Ծիրանաւորի և Ծաղկեվանից. թ. 212։

— Յանուն վիճակային կոնսիստորիային Վրաստանի և Իմերեթի, որով լուծաւ պատկն տաճկահպատակ Խաչատրոյ Ակամեան ընդ կնոջն նորա Սոփիայի, ի պատճառս անյայտ բացակայութեան առն՝ տալով իրաւունս կնոջն մուտանել ի նոր ամուսնութիւն. թ. 213։

— Յանուն թեմական Արցախայ գեր. Տ. Գրիգոր եպիսկոպոսի, որով յայտնեցաւ նմա զկարգմանէ Տ. Սահակ վրդ-ի ի փոխանորդ Նուխւոյ. թ. 221։

— Յանուն փոխ—թեմական Երևանայ գեր. Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ նմա, եթէ ապատ համարեալ է Մկրտիչ քահ. Կաղզման աւանի յապաշխարանաց. թ. 223։

— Յանուն թեմական Արցախայ գեր. Տ. Գրիգոր եպիսկոպոսի, որով պահանջեցաւ բացատրութիւն ի նմանէ, յաղագս վերսին հրաւիրելոյ նորա ի պաշտօն զարձակեալ պաշտօնեայս վիճակային Կոնսիստորիայի տեղւոյն. թ. 245։

— Յանուն Գիւտ Ա. քհ. Ազանեան, որով պատուիրեցաւ նմա պատիկ զտիկին Սբբ-

բուշի Անտոնեան ընդ իշխան Աբշիլիի Դ. Բեկ-Թաբեկեան. թ. 247։

— Յանուն վիճակային Կոնսիստորիայի Վրաստանի և Իմերեթի, որով յայտնեցաւ զեղոյլտութենէ վերոյիշեալ պսակին. թ. 253։

— Յանուն թեմական Բեսարաբիոյ գեր. Տ. Ներսէս արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ նմա զկարգմանէ Տ. Տիրայր վարդապետի ի նախանդամ Կոնսիստորիայի թեմին. թ. 262։

— Յանուն հոգաբարձութեան Ներսիսեան դպրանոցի, որով հաստատեցաւ որոշումն հոգաբարձութեան յաղագս կենսաթոշակին պ. Սեդրաքայ Մանդինեան. թ. 288։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, յաղագս ընթացս տալոյ քննական գործոյն Խաչատուր քհ. Գերդադիլ գեղջ Նուխուոյ. թ. 291։

— Յանուն Տ. Գիւտ Ա. քհ. որով շնորհեցաւ նմա իրաւունք հրատարակելոյ զերիոսին երկասիրութիւնս Վեհափառ Հայրապետի (Դրախտի ընտանիք և Սիրաք և Սամուէլ). թ. 295։

— Յանուն Տ. Սահակ եպիսկոպոսի Այվազեան, որով լուծան պսակք Պետրոսի Մատթէոսեան Մարիամ դիւղացւոյ ընդ անառակ կնոջն Նարգիզի և Մարիամու Աւետիսեան ընդ առն անցայտացելոյ, տալով իրաւունս Պետրոսի Մատթէոսեան և Մարիամու Աւետիսեան մուտնել ի նոր ամուսնութիւն. թ. 299։

— Յանուն փոխանորդին Ախալցխայի Տ. Կիւրեղ վարդապետի, որով փոխադրեցաւ նովին պաշտամամբ ի Կարս. թ. 302։

— Յանուն Տ. Եղիշէ վրդ. Մուրադեան, որով կարգեցաւ փոխանորդ վիճ. Ախալցխայի. թ. 303։

— Յանուն թեմական Վրաստանի և Իմերեթի գեր. Տ. Գէորգ արքեպիսկոպոսի և վիճ. Կոնսիստորիայի Երևանայ, առ ի յայտ առնել նոցա զկարգումն վերոյիշեալ վարդապետաց ի պաշտամունս. թ. թ. 304, 305։

— Յանուն Ամենասրբոյ Պատրիարքին Կոստանդնուպոլսոյ Տ. Մաղաքիա արքեպիսկոպոսի, որով լուծաւ պսակն Զմշկածագցի Մկրտչի Վարդիկեան ընդ անառակ կնոջն նորա Ապապոյ՝ թողլատրելով առն մուտնել ի նոր ամուսնութիւն. թ. 340։

Հայրապետական պարգևք

Շնորհեցան լանջխաչք ականակուսք վարդապետական՝ օգնականի տեսչի Հոգևոր ճեմարանի Մ. Աթոռոյ Տ. Յուսիկ վրդ. Զոհրաբեան, նախագահի տպարանական ժողովոյ Տ. Եղնիկ վրդ. Գեանջեկեան և միաբանի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Բագու քաղաքի Տ. Խորէն Ա. քհ. Միրզաբէկեան։ Վերջինս այս պարգևատրեցաւ ըստ միջնորդութեան ամենապատիւ պատրիարքին ս. Երուսաղեմայ Տ. Յարութիւն արքեպիսկոպոսի. թ. թ. 90, 264, 265։

Շնորհեցան իրաւունք կրելոյ զկամիլաւկայս Տ. Գէորգ քհ. Տ. Աստուածատրեան Բագու քաղաքի և գործակալին Սարգսապատայ Ա. Յովհաննէս քհ. Տ. Յակոբեան. թ.թ. 91, 131։

Շնորհեցան իրաւունք քահանայական լանջխաչից Աբրահամ քհ. Աստապատ գեղջ, Աբսէն քհ. Ջանուկ գեղջ, Յակոբ քհ. Հին Նախիջևանի, Տ. Յովհաննէս քհ. Տ. Գրիգորեան Շուշի քաղաքի, Տ. Գէորգ քհ. Մուշեղեանց Նոր Նախիջևան քաղաքի, Տ. Ներսէս քհ. Տ. Կարապետեան Բագու քաղաքի և կոյս Աննայի Խոջամինասեան միաբանի անապատին կուսանաց Տփխիս քաղաքի. թ. թ. 93, 94, 95, 148, 149, 154, 256։

Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Նիկողայոսի Շահնազարեան Նոր Արմաւիրեցւոյ, յաղագս 300 ռ. նուիրատուութեան յանուն գաղթականաց. թ. 135։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Պետական խորհրդական պ. Ագեքանդրի Ջանշեան, յաղագս կատարելոյ զկամակ հանգուցեալ եղբօր իւրոյ Գրիգորի Աւետեան Ջանշեանց և յղելոյ զկամակեալ գիրսն Հոգ. ճեմարան Մ. Աթոռոյ. թ. 298։